(կազմված է 22.11.2022թ. և բաղկացած է 12 թերթից)

Տպագրված է ընդամենը 2 օրինակ
ՕՐԻՆԱԿ 1

*ՀԱՍՏԱՏՎԱԾ Է*

«Ժողովրդավարությանզարգացման հիմնադրամ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ
հիմնադրելու մասին հիմնադիրների
22 նոյեմբերի 2022թ. որոշմամբ

Հիմնադրամի տնօրեն՝

_______________ Նաիրա Սուլթանյան

*ԳՐԱՆՑՎԱԾ Է*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ
ՌԵԳԻՍՏՐԻ ԿՈՂՄԻՑ
"27" "12" 2022 թ.

գրանցման համար՝ 222.160.1285221

ՀՎՀՀ՝ 02881498

աշխատակից՝

_______________

# «ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ»

## ՀԻՄՆԱԴՐԱՄԻ

## ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Երևան
2022թ.

## I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. «Ժողովրդավարության զարգացման հիմնադրամ» հիմնադրամը (այսուհետև՝ հիմնադրամ) կամավոր գույքային վճարների հիման վրա ստեղծված և անդամություն չունեցող ոչ առևտրային կազմակերպություն է, որը գործում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, միջազգային պայմանագրերի, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք), պահանջներին, «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ օրենք), սույն կանոնադրության և այլ իրավական ակտերի համաձայն:

2. Հիմնադրամի անվանումն է՝

1)Հայերեն լրիվ՝ «Ժողովրդավարության զարգացման հիմնադրամ» հիմնադրամ

2)Հայերեն կրճատ՝ «ԺԶՀ» Հիմնադրամ

3)Ռուսերեն լրիվ՝ Фонд " Фонд развития демократии"

4)Ռուսերեն կրճատ՝ Фонд "ФРД".

5)Անգլերեն լրիվ՝ "Democracy Development Foundation" Foundation

6)Անգլերեն կրճատ՝"DDF" Foundation

3. Հիմնադրամի հիմնադիրներն են
Լանա Ռոբերտի Կառլովա (քաղաքացիությունը՝ ՀՀ, ծնված՝ 02.11.1964թ., նույնականացման քարտ՝ 005962279, տրված՝ 27.06.2017թ. 004-ի կողմից, հաշվառման հասցե՝ ք. Երևան, Կիևյան փողոց, 26 շենք, բնակարան 34, ՀԾՀ՝ 5211640381),
-Աննա Վարուժանի Փամբուխչյան (քաղաքացիությունը՝ ՀՀ, ծնված՝ 29.08.1987թ., նույնականացման քարտ՝ 005863253, տրված՝ 06.04.2017թ. 011-ի կողմից, հաշվառման հասցե՝ ք. Երևան, Խաչատրյան փողոց, 6 շենք, բնակարան 19, ՀԾՀ՝ 7908870732),

4. Հիմնադիրները պատասխանատվություն չեն կրում իրենց ստեղծած հիմնադրամի պարտավորությունների համար: Հիմնադրամը պատասխանատվություն չի կրում իր հիմնադրի պարտավորությունների համար:

5. Հիմնադրամի շահառուներ են համարվում ժողովրդավարության զարգացման և ժողովրդավարական ինստիտուտների կայացման, անձանց իրավունքների պաշտպանության բնագավառում գործունեություն ծավալող ՀՀ քաղաքացիները, քաղաքացիություն չունեցող անձինք, օտարերկրյա քաղաքացիները, իրավաբանական անձինք, կազմակերպությունները:

6. Հիմնադրամի գտնվելու վայրը և իրավաբանական հասցեն՝ ք. Երևան, Նալբանդյան 106/1, տարածք 92, էլ փոստ՝ naira.sultanyan@gmail.com, հեռախոս՝ 091432304:

7. Հիմնադրամն իրավաբանական անձ է և ստեղծված է համարվում պետական գրանցման պահից: Հիմնադրամն ունի իր անվանմամբ (հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով) կլոր կնիք, իր անվանումը պարունակող տիտղոսաթերթեր, դրոշմներ և

ձևաթղթեր, ինչպես նաև անհատականացնող այլ միջոցներ: Հիմնադրամն իրավունք ունի օրենքով սահմանված կարգով բացել բանկային հաշիվներ Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա պետությունների բանկերում` Հայաստանի Հանրապետության դրամով և արտարժույթով:

8. Հիմնադրամն ինքնուրույն է որոշում իր գործունեության ռազմավարական ծրագրերը:

9. Հիմնադրամը, որպես սեփականություն, ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով, կարող է իր անունից կնքել պայմանագրեր, ձեռք բերել և իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

10. Հիմնադրամն ունի օրենքով չարգելված բոլոր եղանակներով իր քաղաքացիական իրավունքների ինքնապաշտպանության իրավունք:

## II. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

11. Հիմնադրամի գործունեության նպատակներն են.

- Նպաստել ժողովրդավարության զարգացմանը և ժողովրդավար պետության կայացմանը,
- Նպաստել թափանցիկ և հաշվետու կառավարման ապահովմանը,
- Նպաստել օրենքի և իրավունքի գերակայության ապահովմանը,
- Նպաստել մարդու և քաղաքացու իրավունքների պաշտպանությանը,
- Նպաստել մամուլի և տեղեկատվության ազատության, անկախ մեդիա հարթակների գործունեության ապահովմանը և ապատեղեկատվության դեմ պայքարին,
- Նպաստել սոցիալական արդարության սկզբունքների գերակայության ապահովմանը, այդ թվում կրթության, հանրային առողջության և աշխատանքային իրավունքների ոլորտներում,
- Նպաստել ակտիվ և կարողունակ քաղաքացիական հասարակության գործունեության ապահովմանը,
- Նպաստել ակտիվ և արդյունավետ մասնակցային կառավարման մշակույթի զարգացմանը,
- Նպաստել բնապահպանական խնդիրների վերհանմանը և աջակցել դրանց կարգավորման գործընթացներում,
- Նպաստել անվտանգային խնդիրների գնահատմանը և դրանց լուծմանն ուղղված մեխանիզմների մշակմանը,
- Նպաստել հասարակական կյանքում արվեստի և մշակույթի դերի բարձրացմանը,
- Նպաստել հանրային նշանակության այլ առաջնային խնդիրների վերհանմանը և աջակցել դրանց կարգավորման գործընթացներում:

12. Առաջադրված նպատակները հիմնադրամը իրականացնում է հետևյալ միջոցներով.

- Աջակցություն քաղաքացիական հասարակության կողմից՝ հանրային քաղաքականության, իրավունքներ պաշտպանության, ինչպես նաև համակարգային բարեփոխումների մշտադիտարկման և գնահատման նախաձեռնություններին,
- Հիմնադրամի գործունեության շրջանակներում թիրախավորված բնագավառներում առկա խնդիրների շուրջ հետազոտությունների իրականացում և քաղաքականությունների մշակում,
- Հիմնադրամի և գործընկեր կազմակերպությունների կողմից իրականացված վերլուծական աշխատանքների հիման վրա ջատագովության իրականացում տեղական և միջազգային հարթակներում,
- Լրատվության տարբեր միջոցների և հանրային իրազեկման նախաձեռնությունների աջակցություն,
- Գրադարաններին, թանգարաններին, հրատարակություններին, թատրոններին, ինչպես նաև կինոյի, ճարտարապետության, երաժշտության և հարակից այլ բնագավառների մշակութային հաստատություններին զորակցում և օժանդակություն,
- Հիմնադրամի նպատակների շրջանակներում քննարկումների, գիտաժողովների, դասընթացների, մրցույթների, հետազոտությունների և թույլատրելի այլ միջոցառումների կազմակերպում,
- Հիմնադրամի նպատակների շրջանակներում ժողովրդավարական արժեքներից բխող այլ ծրագրերի մշակում և իրականացում:

## III. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԳՈՒՅՔԸ

13. Հիմնադրամը՝ որպես սեփականություն, ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով:
14. Հիմնադրամի սկզբնական միջոցներն են հիմնադրի կողմից ստեղծման պահին փոխանցված նյութական և ֆինանսական միջոցները:
15. Հիմնադրի կողմից հիմնադրամին հանձնված գույքը հիմնադրամի սեփականությունն է: Հիմնադրամն այդ գույքն օգտագործում է սույն կանոնադրությամբ սահմանված նպատակներով:
16. Հիմնադրամի գույքի ձևավորման աղբյուրներն են՝

16.1. հիմնադրի ներդրումը.

16.2. ֆիզիկական և իրավաբանական անձանց նվիրատվությունները և նվիրաբերությունները, այդ թվում՝ օտարերկրյա քաղաքացիների, իրավաբանական անձանց, միջազգային կազմակերպությունների նվիրատվությունները և նվիրաբերությունները.

16.3. դրամական մուտքերը պետական բյուջեից.

16.4. դրամաշնորհները, այդ թվում տեղական և օտարերկրյա աղբյուրներից.

16.5. հիմնադրամի և իր ստեղծած կամ իր մասնակցությամբ տնտեսական ընկերությունների ձեռնարկատիրական գործունեությունից ստացված միջոցները.

16.6. հանգանակությունները՝ միջոցներ, որոնք ստացվում են դրանց կուտակմանն ուղղված գործունեությունից (մշակութային, սպորտային, զվարճալի և այլ միջոցառումների միջոցով գումարների հայթայթում).

16.7. օրենքով չարգելված այլ միջոցներ:

17. Հիմնադրամի սեփականությունը չի կարող օգտագործվել ի շահ իր հիմնադրի, հիմնադրամի մարմինների անդամների, ինչպես նաև հիմնադրամի աշխատողների,

բացառությամբ աշխատողների աշխատավարձի և հիմնադրամի մարմինների անդամների պարտականությունների կատարմամբ պայմանավորված փոխհատուցման ենթակա ծախսերի:

## IV. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

18. Սույն կանոնադրության նպատակներին համապատասխան հիմնադրամն իրավունք ունի՝

18.1. անարգել տարածել տեղեկություններ իր գործունեության մասին.
18.2. հիմնադրել մամուլի և զանգվածային լրատվության միջոցներ.
18.3. պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից օրենքով սահմանված կարգով ստանալ տեղեկություններ, որոնք անհրաժեշտ են իր կանոնադրական նպատակներն իրականացնելու համար.

18.4. ստեղծել առանձնացված ստորաբաժանումներ (մասնաճյուղեր, ներկայացուցչություններ) և հիմնարկներ.

18.5. ստեղծել տնտեսական ընկերություններ կամ լինել նրանց մասնակից.
18.6. իրականացնել օրենքով չարգելված այլ գործունեություն:

19. Հիմնադրամը կարող է ձեռնարկատիրական գործունեություն իրականացնել միայն այն դեպքերում, երբ դա ծառայում է սույն կանոնադրությամբ ամրագրված նպատակների իրականացմանը: Հիմնադրամը ձեռնարկատիրական գործունեություն կարող է իրականացնել անձամբ կամ այդ նպատակով ստեղծել տնտեսական ընկերություններ կամ լինել դրանց մասնակից:

20. Հիմնադրամը պարտավոր է՝

20.1. գործել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը, «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքին և այլ օրենքներին ու իրավական ակտերին, ինչպես նաև սույն կանոնադրությանը համապատասխան.

20.2.օրենքով սահմանված կարգով վարել գործավարություն և հաշվապահական հաշվառում.

20.3. օրենքով նախատեսված դեպքերում և կարգով տեղեկատվություն ու հաշվետվություններ ներկայացնել պետական մարմիններին.

20.4. իրականացնել օրենքներով սահմանված այլ պարտականություններ:

21. Հիմնադրի, նվիրատվություններ իրականացրած ֆիզիկական և իրավաբանական անձանց, ինչպես նաև օրենքով լիազորված իրավասու պետական մարմինների պահանջով հիմնադրամը պարտավոր է հնգօրյա ժամկետում նրանց ընձեռել կանոնադրության, կանոնադրության լրացումների և փոփոխությունների հետ ծանոթանալու հնարավորություն: Հիմնադրամը պարտավոր է նրանց պահանջով տրամադրել կանոնադրության պատճենը: Վճարը, որը գանձվում է կանոնադրության պատճենը տրամադրելու համար, չի կարող դրա պատրաստման ծախսերից ավելի մեծ լինել: Օրենքով լիազորված իրավասու պետական մարմիններին նշված փաստաթղթերը տրամադրվում են անվճար:

## V. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

22. Հիմնադրամի մարմիններն են՝

- Հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը (այսուհետ՝ Խորհուրդ)

- Հիմնադրամի տնօրենը:

23. Հիմնադրամի կառավարման բարձրագույն և հսկողություն իրականացնող մարմինը հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդն է: Հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը բաղկացած է հինգ անդամներից: Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամ կարող են լինել 18 տարին լրացած գործունակ ֆիզիկական անձինք, այդ թվում՝ հիմնադիրները: Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամները չեն կարող լինել հիմնադրամի այլ մարմնի անդամ:

23.1 Հիմնադիրները հանդիսանում են հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամ: Հոգաբարձուների խորհրդի մյուս անդամներին ընտրում են հիմնադիրները միաձայն որոշմամբ: Հոգաբարձուների խորհրդի անդամները նշանակվում են երկու տարի ժամկետով: Ժամկետը լրանալուց հետո հոգաբարձուների խորհրդի անդամները ցանկության դեպքում կարող են շարունակել հոգաբարձուների խորհրդի անդամությունը ևս երկու տարի ժամկետով միայն մեկ անգամ:

23.2 Հոգաբարձուների խորհրդի նախագահին ընտրում են Խորհրդի անդամները իրենց կազմից՝ ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:

24. Հիմնադրամի խորհրդի անդամներն իրավունք ունեն՝

24.1. առաջարկություններ ներկայացնելու հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նիստերի օրակարգի և քննարկվող հարցերի վերաբերյալ.
24.2. նախապատրաստելու և հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի քննարկմանը ներկայացնելու հարցեր, առաջարկություններ և որոշումների նախագծեր.
24.3. ստանալու տեղեկություններ հիմնադրամի գործունեությանը վերաբերող ցանկացած հարցի վերաբերյալ.

24.4. ստանալու իր պարտականությունների կատարմամբ պայմանավորված ծախսերի փոխհատուցում:

25. Հոգաբարձուների խորհրդի անդամները պարտավոր են՝

25.1. մասնակցել հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նիստերին.

25.2 իրենց պարտականությունների կատարման ընթացքում գործել՝ ելնելով հիմնադրամի շահերից:

26. Հոգաբարձուների խորհրդի անդամների լիազորությունների ժամկետը 2 տարի է, իսկ անդամի ցանկության դեպքում անդամությունը ևս երկու տարի ժամկետով կարող է երկարաձգվել միայն մեկ անգամ:

Հոգաբարձուների խորհրդի առաջին կազմի անդամների լիազորություններն սկսվում են հիմնադրամի պետական գրանցումից հետո՝ եռամսյա ժամկետը լրանալու հաջորդ օրվանից, իսկ եթե նշանակվել են հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի բոլոր անդամները, ապա դրա հաջորդ օրվանից:

27. Հոգաբարձուների խորհրդի անդամի լիազորությունը դադարում է՝
27.1. հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահին տրված գրավոր դիմումի հիման վրա.

27.2. նրա կողմից իր պարտականությունները պատշաճ չկատարելու դեպքում՝ հոգաբարձուների խորհրդի մնացած անդամների ձայների առնվազն 3/4-ով.

27.3. լիազորությունների ժամկետի ավարտման դեպքում

27.4. եթե դադարել են հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամների ընդհանուր թվի կեսի կամ կեսից ավելիի լիազորությունները.

27.5. դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով անգործունակ ճանաչվելու դեպքում.

27.6. նրան առաջադրած անձի որոշմամբ, եթե նրան առաջադրել է Հայաստանի Հանրապետությունը կամ համայնքը.

27.7. նրա մահվան դեպքում.

27.8. եթե նա նշանակվել է ի պաշտոնե՝ նրա զբաղեցրած պաշտոնին այլ անձ նշանակելու կամ նրա զբաղեցրած պաշտոնի վերացման դեպքում:

28. Հոգաբարձուների խորհրդի անդամի լիազորությունը դադարելու դեպքում նրա փոխարեն նոր անդամ նշանակվում է նախկին անդամի նշանակման կարգով, ոչ ուշ, քան հոգաբարձուների խորհրդի անդամի թափուր տեղ առաջանալու մասին տնօրենի ծանուցումն ստանալու օրվանից հետո՝ 30 օրվա ընթացքում: Հոգաբարձուների խորհրդի անդամի թափուր տեղ առաջանալու մասին տեղեկացված լինելու օրվանից ոչ ուշ, քան 10 օրվա ընթացքում հիմնադրամի տնօրենը տեղեկացնում է հիմնադրին, հոգաբարձուների խորհրդի անդամներին նշանակած անձանց կամ մարմիններին, հիմնադրամի մարմիններին:

29. Եթե հոգաբարձուների խորհրդի բոլոր անդամների լիազորությունների դադարման դեպքում երկամսյա ժամկետում հոգաբարձուների խորհրդի անդամների կեսից ավելին չի նշանակվում, ապա Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարը երկամսյա ժամկետում նշանակում է 3 անդամից կազմված ժամանակավոր խորհուրդ: Ժամանակավոր խորհուրդը պարտավոր է քայլեր ձեռնարկել «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով հոգաբարձուների խորհրդի կազմի համալրման համար:

30. Ժամանակավոր խորհուրդն իրավասու է՝

30.1. իրականացնելու հիմնադրամի գործունեությունը շարունակելուն ուղղված՝ հոգաբարձուների խորհրդին վերապահված լիազորությունները օրենքով սահմանված կարգով.

30.2. դիմելու դատարան՝ հիմնադրամը լուծարելու համար: Եթե ժամանակավոր խորհուրդ նշանակելուց հետո՝ վեցամսյա ժամկետում, հոգաբարձուների խորհրդի անդամների կեսից ավելին չի նշանակվում, ապա ժամանակավոր խորհուրդը պարտավոր է դիմել դատարան՝ հիմնադրամը լուծարելու համար:

31. Հոգաբարձուների խորհրդի իրավասությանն են պատկանում՝

31.1. հիմնադրամի ռազմավարական ծրագրերի հաստատումը.

31.2. հիմնադրամի կողմից իրականացվող (այդ թվում՝ անձամբ) ձեռնարկատիրական գործունեության տեսակների սահմանումը.

31.3. հիմնադրամի բյուջեի և նրա փոփոխությունների, տարեկան ֆինանսական հաշվետվությունների և հիմնադրամի գործունեության տարեկան հաշվետվությունների հաստատումը.

31.4. հիմնադրամի գույքի տնօրինման կարգի հաստատումը, ընդ որում հիմնադրամին պատկանող գույքի (ներառյալ՝ դրամական միջոցները) արժեքը 5.000.000 ՀՀ դրամը գերազանցելու դեպքում տնօրենի կողմից գույքի օտարման որոշումը կայացվում է միայն խորհրդի որոշման հիման վրա.

31.5. հիմնադրամի վերակազմակերպման մասին որոշման ընդունումը.

31.6. հիմնադրամի լուծարման հարցով դատարան դիմելու մասին որոշման ընդունումը.

31.7. հիմնադրամի լուծարման հանձնաժողովի նշանակումը, լուծարման կարգի ու ժամկետների սահմանումը, լուծարման միջանկյալ հաշվեկշռի հաստատումը, լուծարման հաշվեկշռի հաստատումը.

31.8. հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամների լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին որոշումների ընդունումը.

31.9. հոգաբարձուների խորհրդի նախագահի (համանախագահների), տնօրենի ընտրության և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարման մասին որոշումների ընդունումը.

31.10. հիմնադրամի կանոնադրության մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու, կանոնադրության փոփոխություն, նոր խմբագրությամբ կանոնադրություն հաստատելու մասին որոշումների ընդունումը.

31.11. տնտեսական ընկերությունների ստեղծման կամ դրանցում մասնակցության, ինչպես նաև առանձնացված ստորաբաժանումների և հիմնարկների ստեղծման ու դրանց կանոնադրությունների հաստատման մասին որոշումների ընդունումը.

31.12. հիմնադրամի ֆինանսատնտեսական գործունեության վերահսկումը.

31.13. ամեն տարվա առաջին եռամսյակում տնօրենի նախորդ տարվա հաշվետվությունների լսումը.

31.14. իր որոշումների կատարման ընթացքի վերահսկումը.

31.15. հիմնադրամի աուդիտ իրականացնող անձի (աուդիտորի) ընտրությունը.

31.16. հիմնադրամի կառուցվածքի հաստատումը.

31.17. հիմնադրամի հաստիքացուցակի հաստատումը.

31.18. 5.000.000 միլիոն ՀՀ դրամը գերազանցող դրամաշնորհներ հատկացնելու վերաբերյալ որոշման կայացումը,

31.19. օրենքով նախատեսված, ինչպես նաև հիմնադրամի այլ մարմիններին չվերապահված այլ լիազորությունների իրականացումը:

32. Հոգաբարձուների խորհրդի իրավասություն հանդիսացող հարցերը չեն կարող փոխանցվել այլ մարմնի:

33. Հոգաբարձուների խորհուրդն իրավունք ունի ծանոթանալու հիմնադրամի բոլոր փաստաթղթերին:

34. Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նիստերը և որոշումները.

34.1. Հոգաբարձուների խորհուրդն իր գործունեությունն իրականացնում է նիստերի միջոցով: Հիմնադրամի խորհրդի նիստերը գումարվում են ոչ պակաս, քան տարին մեկ անգամ՝ Հիմնադրամի խորհրդի նախագահի կողմից: Հիմնադրամի խորհրդի նիստերը կարող են հրավիրվել նաև Հիմնադրամի խորհրդի անդամների 1/3-ի պահանջով՝ Հիմնադրամի Խորհրդի նախագահի կողմից՝ համապատասխան պահանջը ներկայացնելուց 30 օրվա ընթացքում: Եթե նշված ժամկետում հոգաբարձուների խորհրդի նախագահը նիստ չի հրավիրում, ապա նիստ կարող են հրավիրել նման պահանջ ներկայացրած անձինք:

34.2. Հոգաբարձուների խորհրդի նիստն իրավազոր է, եթե դրան մասնակցում է հոգաբարձուների խորհրդի անդամների կեսից ավելին: Հոգաբարձուների խորհրդի որոշումներն ընդունվում են նիստին մասնակցող անդամների ձայների մեծամասնությամբ, բացառությամբ սույն կանոնադրությամբ նախատեսված դեպքերի: Քվեարկության ժամանակ խորհրդի յուրաքանչյուր անդամ ունի մեկ ձայն:

34.3. Հոգաբարձուների խորհրդի նախագահի (համանախագահների) ընտրության և ազատման, հիմնադրամի տնօրենի ընտրության և պաշտոնից ազատման, ինչպես նաև հիմնադրամի անվանման փոփոխության, լուծարման և կանոնադրության փոփոխության կամ նոր խմբագրությամբ կանոնադրության հաստատման մասին որոշումներն ընդունվում են հոգաբարձուների խորհրդի անդամների ընդհանուր թվի ձայների 2/3-ով:

34.4. Հիմնադրամի վերակազմակերպման դեպքում, Խորհուրդը Հիմնադրամի Վերակազմակերպման մասին որոշումն ընդունում է Խորհրդի անդամների ընդհանուր թվի որակյալ (2/3) մեծամասնությամբ:

34.5. Եթե հոգաբարձուների խորհրդի նիստում քննարկվում է հիմնադրամի խորհրդի որևէ անդամի կամ նրա հետ փոխկապակցված անձի (ծնող, ամուսին, զավակ, եղբայր, քույր, ամուսնու ծնող, զավակ, եղբայր և քույր) գույքային կամ այլ շահերի վերաբերյալ հարց, ապա հոգաբարձուների խորհրդի տվյալ անդամը քվեարկությանը չի մասնակցում:

34.6. Հիմնադրամի մարմինների նիստերը արձանագրվում են: Արձանագրությունը ստորագրում են հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահը և նիստի քարտուղարը:

35. Հիմնադրամի խորհրդի նախագահը

35.1. Հոգաբարձուների խորհրդի նախագահին (համանախագահներին) ընտրում են խորհրդի անդամները՝ հոգաբարձուների խորհրդի անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:

Հոգաբարձուների խորհուրդը կարող է ցանկացած ժամանակ վերընտրել նախագահին (համանախագահներին) կամ ընտրել նոր նախագահ (համանախագահներ)՝ իր անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:

35.2. Խորհրդի նախագահը (համանախագահները) `

- կազմակերպում է հոգաբարձուների խորհրդի աշխատանքները, անհրաժեշտության դեպքում կարող է կազմավորել հոգաբարձուների խորհրդի ժամանակավոր հանձնախմբեր, հիմնադրամի ֆինանսատնտեսական գործունեության վերահսկման և

դրանց վերաբերյալ հոգաբարձուների խորհրդին եզրակացություններ (տեղեկանքներ) ներկայացնելու համար.

- գումարում է հոգաբարձուների խորհրդի նիստերը և նախագահում է դրանք.
- կազմակերպում է նիստերի արձանագրության վարումը.
- հոգաբարձուների խորհրդի քննարկմանն է ներկայացնում հոգաբարձուների խորհրդի անդամների լիազորությունների դադարեցման մասին որոշման նախագիծ: Հոգաբարձուների խորհրդի նախագահի (համանախագահների) բացակայության դեպքում նրա պարտականությունները, հոգաբարձուների խորհրդի որոշմամբ, կատարում է անդամներից մեկը:

36. Հիմնադրամի տնօրենը.

36.1. Հիմնադրամի ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է տնօրենը:

36.2. Տնօրենի իրավասությանն են պատկանում հիմնադրամի ընթացիկ գործունեության կառավարման բոլոր հարցերը:

Տնօրենը կազմակերպում է հոգաբարձուների խորհրդի որոշումների կատարումը:

Տնօրենին ընտրում և պաշտոնից ազատում է հոգաբարձուների խորհուրդը: Առաջին անգամ այդ պաշտոնում նշանակում են հիմնադիրները: Տնօրենի իրավունքներն ու պարտականությունները սահմանվում են օրենքով, սույն կանոնադրությամբ և նրա հետ կնքված պայմանագրով: Հիմնադրամի անունից պայմանագիրը ստորագրում է հոգաբարձուների խորհրդի նախագահը (համանախագահը) կամ հոգաբարձուների խորհրդի լիազորած այլ անձ:

36.3. Տնօրենը`

- տնօրինում է մինչև 5.000.000 ՀՀ դրամ արժեք ունեցող հիմնադրամի գույքը, այդ թվում` ֆինանսական միջոցները, գործարքներ է կնքում հիմնադրամի անունից սահմանված կարգի համաձայն.

-տնօրինում է 5.000.000 ՀՀ դրամը գերազանցող հիմնադրամի գույքը, այդ թվում` ֆինանսական միջոցները` խորհրդի որոշման հիման վրա, գործարքներ է կնքում հիմնադրամի անունից` սահմանված կարգի համաձայն.

- ներկայացնում է հիմնադրամը Հայաստանի Հանրապետությունում և օտարերկրյա պետություններում.

- գործում է առանց լիազորագրի.

- տալիս է լիազորագրեր.

-սահմանված կարգով կնքում է պայմանագրեր, այդ թվում` աշխատանքային.
- բանկերում բացում է հիմնադրամի հաշվարկային (այդ թվում` արտարժութային) և այլ հաշիվներ.

- հոգաբարձուների խորհրդի հաստատմանն է ներկայացնում հիմնադրամի աշխատանքային ներքին կանոնակարգը, առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների ու հիմնադրամի կողմից հիմնադրվող տնտեսական ընկերությունների կանոնադրությունները, հիմնադրամի վարչակազմակերպական կառուցվածքը, հաստիքացուցակը.
- իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ,

կատարման համար տալիս է պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը.

- աշխատանքի է ընդունում և աշխատանքից ազատում է հիմնադրամի աշխատողներին, այդ թվում՝ հիմնադրամի առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների ղեկավարներին ու աշխատողներին.

- աշխատակիցների նկատմամբ կիրառում է խրախուսման և կարգապահական պատասխանատվության միջոցներ:

-միանձնյա ընդունում է մինչև 5.000.000 (հինգ միլիոն) ՀՀ դրամ դրամաշնորհներ տրամադրելու վերաբերյալ որոշումներ,

- իրականացնում է օրենքով նախատեսված, ինչպես նաև հիմնադրամի այլ մարմիններին չվերապահված լիազորություններ:

37. Տնօրենը այլ կազմակերպություններում կարող է վճարովի պաշտոններ զբաղեցնել միայն հոգաբարձուների խորհրդի համաձայնությամբ:

38. Հոգաբարձուների խորհուրդն իրավունք ունի ցանկացած ժամանակ լուծել տնօրենի հետ կնքված պայմանագիրը՝ օրենքով, հիմնադրամի կանոնադրությամբ և տվյալ պայմանագրով սահմանված կարգով:

## VI. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

39. Հիմնադրամը կարող է վերակազմակերպվել միայն հիմնադրամի՝ այլ հիմնադրամին միացման կամ այլ հիմնադրամի հետ միաձուլման ձևով:

40. Հիմնադրամի վերակազմակերպումը կատարվում է հիմնադիրների միաձայն որոշմամբ կամ հոգաբարձուների խորհրդի անդամների ընդհանուր թվի ձայների 2/3 - ի որոշմամբ:

41. Հիմնադրամի վերակազմակերպման մասին որոշումն ընդունելուց հետո՝ 30 օրվա ընթացքում, հիմնադրամը այդ մասին գրավոր ծանուցում է իր բոլոր պարտատերերին:

42. Վերակազմակերպման մասին ծանուցման պահից 30 օրվա ընթացքում վերակազմակերպվող հիմնադրամի պարտատերերն իրավունք ունեն հիմնադրամից պահանջել պարտավորությունների կատարման լրացուցիչ երաշխիքներ, պարտավորությունների դադարեցում կամ վաղաժամկետ կատարում, ինչպես նաև վնասների հատուցում:

43. Միաձուլման (միացման) պայմանագիրը կնքվում է միաձուլմանը (միացմանը) մասնակցող հիմնադրամների միջև, ստորագրում են տնօրենները և ենթակա է հաստատման վերակազմակերպման մասին որոշմամբ:

44. Լուծարումը հիմնադրամի գործունեության դադարումն է՝ առանց նրա իրավունքներն ու պարտականություններն իրավահաջորդության կարգով այլ անձանց անցնելու:

45. Հիմնադրամը լուծարելու մասին որոշում կարող է ընդունել միայն դատարանը՝ շահագրգիռ անձանց դիմումով:

46. Հիմնադրամը կարող է լուծարվել, եթե՝

- հիմնադրամի գույքը բավարար չէ նրա գործունեության իրականացման համար և անհրաժեշտ գույք ստանալու հնարավորությունն իրական չէ.
- իր գործունեությամբ հիմնադրամը շեղվել է կանոնադրությամբ նախատեսված նպատակներից.
- հնարավոր չէ հասնել հիմնադրամի նպատակներին և կատարել այդ նպատակների փոփոխություններ.
- հիմնադրամի գործունեությունը վտանգում է պետական և հասարակական անվտանգությունը, հասարակական կարգը, հանրության առողջությունն ու բարքերը, այլոց իրավունքներն ու ազատությունները.
- հիմնադրամը թույլ է տվել օրենքի բազմակի կամ կոպիտ խախտումներ կամ պարբերաբար իրականացրել է իր կանոնադրական նպատակներին հակասող գործունեություն.
- հիմնադրամն ստեղծելիս հիմնադիրը թույլ է տվել օրենքի էական խախտումներ կամ կեղծիքներ.
- հիմնադրամը կարող է լուծարվել նաև ՀՀ օրենքներով նախատեսված այլ դեպքերում:
47. Հիմնադրամի լուծարումն իրականացվում է օրենքով սահմանված կարգով:

48. Դատարանի կողմից հիմնադրամի լուծարման մասին որոշում ընդունելուց հետո հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը նշանակում է լուծարման հանձնաժողով (լուծարող) և Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի և ՀՀ «Հիմնադրամների մասին» օրենքի համաձայն՝ սահմանում է լուծարման կարգը և ժամկետները:
49. Հիմնադրամի լուծարման դեպքում պարտատերերի պահանջները բավարարելուց հետո, ինչպես նաև այն դեպքում, երբ լուծարման միջանկյալ հաշվեկշիռը հաստատելու պահին հիմնադրամը չունի պարտավորություններ պարտատերերի նկատմամբ, գույքն ուղղվում է հիմնադրամի կանոնադրությամբ նախատեսված նպատակներին, դրա անհնարինության դեպքում դրամական միջոցները փոխանցվում են պետական բյուջե, իսկ այլ գույքը սեփականության իրավունքով փոխանցվում է Հայաստանի Հանրապետությանը՝ ի դեմս Կառավարության, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի:

50. Հիմնադրամի լուծարումը համարվում է ավարտված, իսկ նրա գոյությունը դադարած՝ պետական գրանցման պահից:


02